քարա որդին, իր վարպետին մահէն ետք՝ կ'ամբողջացնէ անոր սկսած Աւետարանը, 1505ին, ի Վան։

Ան ունեցած ըլլալու է տակաւին մեզի անծանօթ բազմաթիւ աշակերտներ, որոնք անշուշտ հետզհետէ պիտի յայտնուին։

* * *

Իբր ծանօթութիւն՝ աւելցնեմ, որ Մանկասարենց Թումա մըն ալ կը յիշուի, 1415ին, Ծերուն (որ «ի նարդեան ժամանակիս Հէրպէտ կոչիմ») գրչէն, իր Աւետարանին յիշատակարանին մէջ, կարգ մը տանուտէրերու շարքին։ Աւետարանը գրուած է Ռշտունեաց Ապալանքի Սբ. Վարդան մենաստանը (Նօտարք Հայոց, էջ 46)։

1415ին, Յով. Մանկասարենց նոր ծընած էր։ Եղբայրներ և քոյրեր ունենալուն մասին՝ ոչինչ ծանօթ է։

(Շար. 2)

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԷՋԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

ՉԱՐՄԱՀԱԼ ԳԱՒԱՌԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Իրանի Չարմահալ գաւառի հայաբնակ գիւղերում գեղջուկ ժողովուրդն իր գոյութեան 360 երկար տարիների պատմութեան ընթացքում, ունեցել է իր ինքնատիպ ժողովրդական բժշկութիւնը եւ դեղերի պատրաստութեան մշակոյթը, որոնք, սակայն, ժամանակի բժշկական գրականութեան մէջ չեն ընդգծուել եւ մինչեւ օրս էլ մնացել են անտիպ։

Այդ ժողովրդական բժշկութեան եւ դեղատոմսերի փաստական աղբիւրները գրաւոր կերպով առաջին անգամ հրատարակում ենք Բազմավէպում, որպէսզի հայ բժշկական գրականութեան սեփականութիւնը դառնան եւ ընդմիշտ կորստից փրկուեն։ Դրանք իրենց հիմնական բովանդակութեամբ ընդգրկում են երկու տարբեր աշխարհամասեր – Հայաստանեան եւ իրանական։

Հայ գեղջուկներն իրենց պապերից ժառանգաբար աւանդ ստացած բժշկական հմտութիւնը, 1605 թուին, Շահ-Աբբաս Մեծի բռնի գաղթի շրջանում Հայաստանից իրենց հետ բերում են Չարմահալ եւ նոր միջավայրում նրանք իրենց բժշկական արուեստը նորանոր գիտելիքներով աւելի ճոխացնում են։ Դրանք իրենց ամբողջութեամբ սերնդից սերունդ աւանդուած բժշկական մշակոյթի յուշարձաններ են, որոնց հետաքրքրութիւնը եւ ուսումնասիրութիւնը նշանակալից են այն տեսակէտից, որ հարստացնում են հայ բժշկական գրականութեան գանձարանը։

Սակայն, ընդգծենք մի կարեւոր հանգամանք։ Չարմահալի հայ գիւղացիների առողջապահութեան եւ բժշկական օգնութեան գործը, մինչեւ ԺԹ. դարի վերջին շրջանը, շատ անմխիթար պատկեր է ներկայացնում։ Միայն Ի. դարի ըսկզբներից, Նոր-Ջուղայի «Յովսէփ Պօղոսեան» հիւանդանոցի Յանձնախմբի կարգադրութեամբ, երբեմն շրջուն բըժիշկներ՝ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ պայքարելու համար՝ գնացել են

Չարմահալ եւ գիւղացիներին բժշկական օգնութիւն են ցոյց տուել։ Փաստ է եւ այն, որ մինչեւ «Չարմահալ գաւառի հայ բժշկակայանի Միութեան»* 1941 թուին, Մամուռան գիւղում Բուժարանի բացումն՝ ամբողջ գաւառը չի ունեցել ո՛չ իր բժշկատունը, ո՛չ իր հիւանդանոցը եւ ո՛չ էլ իր յատուկ այցելու բժիշկը։ Այդ տըխուր երեւոյթով պիտի բացատրել, որ Չարմահալում գիւղացիների ամենամեծ եւ ամէնէն ոխերիմ թշնամիները հանդիսացող տարափոխիկ հիւանդութիւններն ու համաճարակները բազմաթիւ անմեղ ու պայծառ կեանքերի մահուան պատճառ են դարձել։

Հայ ծերունի գիւղացիների վկայութեամբ՝ Չարմահալում ամէնից շատ տարածուած եւ ամենավտանգաւոր հիւանդութիւններից, որոնց գեղջուկներն երկար տարիներ շարունակ ենթակայ են եղել, կեդրոնական տեղ են գրաւել դողյոցը, ջերմը, մալարիան, աչքացաւը, Բութեշը, ոսկրացաւը, դիզենտերիան, որոնք դժբախտացրել են գիւղացիների ընտանեկան խաղաղ ու երջանիկ կեանքը. իսկ ծաղիկ ու կարմրուկ հիւանդութիւնները խամրել են բազմաթիւ անմեղ ու պայծառ մանուկների արեւաշող կեանքը։ Դեռ 1895 եւ 1917 թուականների վիճակագրական տեղեկութիւնները վկայում են, որ ծաղիկ եւ կարմրուկ հիւանդութիւններից Չարմահալի տարբեր գիւղերում վախճանուել են մօտ 50 անմեղ երեխաներ, որոնք իրենց ծնողների սրտերը համակել են անսահման տխրութեամբ ու խորունկ վշտով։

Չարմահալում վարակիչ հիւանդութիւններից նոյնքան բացասական ու քայքայիչ դեր են կատարել վեներական ախտերը, որոնք խորապէս յուզել են գիւղացիների հոգեկան աշխարհը։

Ընդգծուած ծանր եւ վտանգաւոր հիւանդութիւններից ազատուելու համար՝ երկիւղած ու պարզամիտ գիւղացիներից ոմանք, հնագոյն շրջանում, դիմել են սրբերի օգնութեանը, ուխտ են կատարել, մատաղ են արել, խունկ ծխել, մոմեր վառել. իսկ չար ոգիներից եւ չար աչքերից փրկուելու համար դիմել են գիւղական գուշակներին, «Փալչի»ներին կամ գիւղի քահանային, որ հիւանդների գլխին կարդացել է անմահ քնարերգակ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու «Նարեկ»ը եւ այլ աղօթքներ է մրմնջացել։

Սակայն, Չարմահալի շատ գիւղերում հայ գիւղացիները բժշկական օգնութիւնից միանգամայն զուրկ լինելով՝ դիմել են գիւղական բժիշկներին, «Ջառահներին» (վիրահատներին), որոնք իրենց բըժշկական «հմտութիւնը» հաղորդել են ժառանգաբար։ Կան նաեւ «չքեասթ բանդ»ներ, որոնք իրարից են սովորել։ Նրանք հիւանդի վնասուած ոսկորները կապել են, կամ դուրս ընկածը տեղը գցել, իսկ տեղական բոյսերից ու արմատներից պատրաստել են մի քանի տեսակ դեղեր։

Արձանագրենք եւ այն, որ Չարմահալում ամէն մի գերդաստանում դեր են կատարել պառաւներն ու ծերունիները, որոնք ծանօթ լինելով սովորական հիւանդութիւնների բժշկութեանը, իրենք են բժշկել. եւ երբ նկատել են, որ իրենց դեղերը չեն օգնել, դիմել են գիւղական բըժիշկ-կանանց։ Դրանք գլխաւորապէս տատմէրներն են, որոնք սովորաբար սերնդից սերունդ աւանդել են իրենց բժըշկական գիտութիւնը եւ անձնական փորձառութեամբ ձեռք բերած «արուեստը»։ Ընդհանրապէս Չարմահալի հայաբնակ որոշ գիւղերն ունեցել են իրենց տեղական բժիշկները, որոնք չորս-հինգ սերունդ յաջորդաբար զբաղուել են հիւանդութիւնների բժշկութեամբ. նրանք բժշկական գիտելիքները սովորել են իրենց պապերից։

---

*) «Չարմահալ գաւառի հայ բժշկական Միութիւնը» հիմնուել է 1941 թուի սկզբին Նոր-Ջուղայում, որի հիմնադիր անդամների շարքում պատուաւոր տեղ են գրաւում՝ Տ. Կարապետ քհ. Մանսուրեան, Յարութիւն Ասլանեան, Յովհաննէս Օհանեան, Բարդուղ Բարդուղեան, Մալուս Սուքիասեան, Անդրանիկ Ղարախանեան, Գալուստ Մելքոնեան, Յովհաննէս Կարապետեան եւ այլ չարմահալցի գիտակից ու ազնիւ մտաւորականներ։

© National Library of Armenia

Կան նաեւ ժողովրդական «ամենագէտ» բժիշկներ, որոնք բժշկել են ամէն տեսակ հիւանդութիւններ: Դրանք այն կին-բժըշկուհիներն են, որոնք իրենց գիւղում անուն ու հեղինակութիւն են ունեցել: Դրանցից Մամուքա գիւղում յայտնի է ընիկ Լիւասեանցի Շախսանամ Զառահեանը, որ ո՛չ միայն գիւղի տատմէրն է, այլեւ երկար տարիներ զբաղուել է մասսաժ անելով: Միջահասակ, գեղեցկադէմ, համեստ, լեզուանի, մօտ 49 տարեկան այս գեղջկուհին ծնուել է նախկին Հայաբնակ Լիւասեան գիւղում: Նիւթական անմխիթար պայմանները, սակայն, նրան ստիպում են Լիւասեանից փոխադրուել Մամուքա: Նա վաղ հասակից սիրել է բժըշկական արուեստը, իսկ իր բժշկութեան գիտելիքները սովորել է իր ծնողներից, որոնք Զարմահալում մեծ հեղինակութիւն են ունեցել: Նրա պապը՝ Աստուածատուր Յովսէփեանը, հայրը՝ Յովսէփ Զառահեանը, մայրը՝ Կատարինէն, ամբողջ չորս սերունդ, Զարմահալում զբաղուել են բժշկութեամբ: Նրանք բժշկութեան արուեստի մեծ փորձ են ունեցել եւ փայլել իրենց բժշկական հմտութեամբ: Ուշագրաւ է եւ այն, որ նրանք իրենց բըժըշկական գիտութիւնը սովորել են իրարից եւ օգտակար եղել գեղջուկ ժողովրդին, նուիրուել են գլխաւորապէս հասարակ ու աղքատ գիւղացիների առողջապահութեանը:

Շահսանամ Զառահեանը եւս նուիրուել է պապի եւ ծնողների աւանդ թողած բըժըշկական գիտութեանը: Նա իր հարազատների եւ հին ու նոր ժամանակների աւանդ թողած բժշկական արուեստի ժառանգութիւնը բարեխղճութեամբ ուսումնասիրել է եւ հիմնուած անձնական փորձառութեան վրայ, բազմակողմանի կերպով խորացել է բազմազան հիւանդութիւնների առաջացման պատճառների ու բժշկութեան հանգամանքների մէջ:

Ուղիղ երեք տասնամեակ, Շահսանամ Զառահեանը Մամուքա գիւղում զբաղուել է բժշկութեամբ, նուիրուել է գեղջուկ ժողովրդի առողջապահութեան վեհ գործին եւ իր բժշկական գիտութեամբ բազմաթիւ հիւանդներին առողջութիւն է պարգեւել:

Շահսանամի բժշկական գիտութեան էական առանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ նա ընդգծել է տարբեր հիւանդութիւնների նկարագիրը եւ բուժման դեղանիւթերը: Նշանակալից է եւ ուշադրութեան արժանի եւ այն, որ նա իր բժշկական գիտելիքները եւ դեղերի անունները գեղջուկ հիւանդներին հաղորդել է հասկանալի ձեւով, յիշատակել է հայերէն եւ պարսկերէն լեզուներով: Իւրաքանչիւր հիւանդութեան մասին խօսելիս՝ նա արձանագրել է, թէ դեղերն ի՞նչ հիւանդութեան համար են օգտագործւում, ի՞նչ դեղերի հետ է խառնուած եւ ի՞նչ չափով:

Շահսանամի զանազան հիւանդութիւնների դեղերի հաղորդումը բարձրացնում է նրա բժշկական գիտութեան նշանակութիւնն այն տեսակէտից, որ նա իր փորձառութիւնը նուիրել է Զարմահալի հայ գեղջուկների առողջապահութեանը, իսկ նրա բժշկական բազմազան գիտելիքները վկայում են, որ նա եղել է իր ժամանակի յայտնի բժիշկներից մէկը, թէ՛ որպէս բժշկուհի եւ թէ՛ տատմէր: Ահա թէ ինչո՛ւ նրա յիշատակած դեղերը եւ բժշկութեան ձեւերն ուսանելի են ու արժէքաւոր հայ բժշկութեան պատմութեան համար:

Բայց կայ մի էական երեւոյթ: Զարմահալի ժողովրդական բժշկութեան եւ դեղերի էական նիւթերը հետզհետէ մոռացւում են տարեցների յիշողութեան մէջ, իսկ նոր սերունդը համարեա գաղափար չունի այդ բժշկական գիտելիքների մասին, որոնք 360 երկար տարիներ չարունակ իր նախնիքների բժշկական գիտութիւնն են եղել: Այդ հիմնական նիւթերի փրկութիւնն այսօր դարձել է մի հրամայական պահանջ: Այդ նպատակով էլ 1919 եւ 1946 թուականներին Զարմահալում գիմեցինք ժողովրդական բժիշկներին – Շահսանամին եւ այլ վաստակաւորներին, խնդրելով, որ իրենց սրտերում թաքցրած բժշկական տեղեկութիւնները

բարեհաճին հաղորդել: Նրանցից Շահսանամը դուրս գալով միջնադարեան բժըշկութեան գաղտնապահութեան դէմ, հասարակութեան եւ բժշկական արուեստին օգտակար լինելու նպատակով, գեղջկական ամօթխածութեամբ պատմեց մեզ ո՛չ միայն իր բժշկական գիտութեան մասին, այլեւ տուեց մի շարք հիւանդութիւնների տեսակները, արձանագրեց նաեւ դրանց բժշկելու միջոցները եւ զանազան դեղեր պատրաստելու գաղտնիքը:

Թէ՛ Շահսանամի դեղատոմսերը եւ թէ՛ մի շարք հիւանդութիւնների ու նրանց բըժշկելու ձեւերի ու եղանակների վերաբերեալ նրա առաջադրանքները մեր ժամանակի բժշկութեան կողմից ո՞րքան ընդունելի են, այդ մասին չենք անդրադառնում, այլ արձանագրում ենք միայն «վաստակաւոր բժշկուհու» փաստական տեղեկութիւնները:

— Յարգելի պարոն Արա՛մ, գիմեց մեզ Շահսանամ բժշկուհին, երբ միասին նըստեցինք իրենց հիւրասենեակում, շնորհակալ եմ, որ նեղութիւն էք կրել եւ եկել մեր գիւղը, որպէսզի գրէք մեր ցաւերի մասին: Հազար բարո՛վ էք եկել. միտքս այն է, որ հիւանդութիւնների մեծ մասն առաջ են գալիս կեղտոտութիւնից կամ հին կերակրից: Այն էլ ասեմ, որ մեր գեհին կերակրից: Այն էլ ասեմ, որ մեր գեղցիք իրենց պահել չեն իմանում. յոգնած, քրտնած՝ պաղ ջուր են խմում և հիւանդանում: Մեր պապերից սովորած գեղերով հիւանդներին բժշկում ենք եւ լաւացնում: Հիմեկ պատմեմ տարբեր հիւանդութիւնների մասին:

Գլխացաւ

Երբ մէկի ներսն անմաքուր է, «բուխարը», այսինքն՝ տաքութիւնը տալիս է գլխին: Բղի (ուռենու) ծառի տերեւներով հիւանդի գլուխը փաթաթել եւ գլխաշորով ծածկել, մինչեւ տաքութեան անցնելը:

Սակայն, երբ հիւանդը սաստիկ գլխացաւ ունի, այն ժամանակ պարսիկ աթթարից* գնել չորս մսխալ քենաքինա, երկու մսխալ հիլելա, երկու մսխալ աքենջամի, մի մսխալ չղոովա, տասը հատ էլ հուլուլի կորիզի մազը (միջուկը) լըցնել ․անդը եւ բոլորը միասին ծեծել: Ապա կէս վայրկեան տաքացնել եւ սխտոր մեծութեամբ կլորել: Այնուհետեւ երկուսն երեկոյեան եւ երեքն առաւօտեան կուլ տալ: Այդ օրը կերակուր չուտել: Եթէ ներսը չատ գործէ, կերակուր ուտել, պնդութեան պարագայում՝ սխտոր եփել եւ ջուրը խմել:

Աչքացաւ

Պարսիկ աթթարից գնել կէս մսխալ դաւարոխդա, որը ծեծել եւ մալմալից անցկացնել, ապա աղջիկ զաւակ ունեցող մօր կաթից մի երկու կաթիլ կթել, լցնել դաւարոխդայի վրայ եւ խառնել, յետոյ օրն երկու անգամ կաթեցնել աչքերի մէջ: Շատերը կան, որոնք կեղտոտ ձեռքերով իրենց աչքերը տրորում են, որի հետեւանքով աչքերը կարմրում են, կոպերն ուռչում եւ թարախակալում: Այդ ժամանակ աղի ջրով կամ ջրախառն բորայի թըթուար մէկ թէյի գդալով ջրի մեծ բաժակում ածել եւ ժամը մէկ անգամ աչքերը լուանալ: Եթէ աչքի մէջ մազ է դուրս գալիս, կոպի տակից, մի մաքուր ծղի վըրայ ծամօն փաթաթել, կրակի վրայ տաքացնել եւ երբ սկսի եռ գալ՝ քսել մազի վրայ եւ արտեւանունքի հետ միացնել:

Աչքի կոպերի վէրք

Պարսիկ դեղավաճառից գնել ղունէֆանդի կապոյտ քարը, վէրքի վրայ քըսել, յետոյ խոկոյն լուանալ նախ՝ գոլ ջըրով, ապա՝ աղջիկ զաւակ ունեցող կնոջ կաթով:

Ականջացաւ

Բրմանդինեար գոլ ջրի մէջ ածել եւ նոյն ջրով լուանալ կամ մի կաթիլ զահ-

---

*) Տնային դեղեր վաճառող պարսիկ խանութպան, որ դաշտային ու լեռնային բոյսերից, ծառերի տերեւներից, արմատներից եւ պտուղների կորիզներից տարբեր դեղեր է պատրաստում:

© National Library of Armenia

վառու (գնել աթթարից) կաթեցնել ականջի մէջ։

Ատամնացաւ

Հինգ մսխալ մաքուր չինի (թէյի բաժակի կամ պնակի), երկու մսխալ թարաշիր (գնել աթթարից) եւ մի մսխալ զանգ, միասին ծեծել, մաղել, ածել եղէգի մէջ եւ փչել ատամների վրայ։ Կամ մանանեխը եւ ընկոյզն անապակ գինով եփել եւ բերանն ողողել։

Եթէ ատամնացաւի պատճառով ջուր է գողանում եւ ուռում, այն ժամանակ մի փէնար ալիւրը հինգ մսխալ իւղով բովել, վրան մի գանար մածուն ածել եւ կէս ժամ թողնել կրակի վրայ, ապա գոլացնել եւ դնել ուռուցքի վրայ։ Եթէ ցաւը չկտրուի, աթթարից կէս մսխալ քէթռաղուղի դնել, ծեծել, ածել մալմալում, ջրի մէջ թրջել, ապա մի բոպէ տաքացնել եւ դնել ցաւացած ատամի վրայ։

Քթացաւ

Կովի հում սերը քսել ցաւացած տեղը, ապա աթթարից դնել քունջիդ, ծեծել եւ քթի մէջ քաշել։

Քթից արիւն գալ

Քթից հոսող արիւնը կանգնեցնելու համար գլխին սառը ջուր ածել. եթէ չկտրուի քիսին (եզան կեր) ածել կրակի վրայ եւ բարձրացող ծուխը տանել քթածակերին։ Եթէ նորից չօգնի, կրակի վրայ անանուխ ածել եւ ծուխը քաշել քթի մէջ։ Երբ արիւնը կտրուի, յուլունքը սիսեռի հետ ծեծել, մալմալով մաղել եւ քաշել քթի մէջ։ Կամ ձեռքերը վերեւ բարձրացնել, ճակատի վրայ սառը փաթեթներ դնել եւ շուտ-շուտ փոխել։ Նոյնպէս քթով գոլ ջուր ներս քաշել։

Բերնի վէրք

Եթէ բերանում վէրք է լինում և չի կարողանում կերակուր ուտել, թանի չիճուկը, որ կոչւում է զառզառուք, երկու գդալ բերանում դնել եւ ողողել։ Կամ եզան լեզու կոչուած խոտը, որ բսնում է առուի ափերին, սանդում ծեծել, քամել եւ ջրով բերանն ողողել։

Կուլացաւ (կոկորդացաւ)

Առաւօտեան անսուաղ (անօթի) կղակի տակից դէպի ականջները մատներով երեք անգամ մաժել, ընդամէնն երկու առաւօտ. կամ լեզուի տակ գտնուած երկու երակներից նշտարով արիւն առնել։

Բկացաւ

Առաջ է գալիս գլխաւորապէս մրսելուց, որի նշաններն են. — հիւանդի բերանը կարմրում է, քիմքն ուռում, տեղ-տեղ երեւում են սպիտակ թաղանթներ կամ լեզուն ուռչում է եւ սպիտակով ծածկւում, իսկ լորձունքը կուլ տալիս՝ ցաւ է զգում, երբեմն էլ ջերմ է լինում։ Բժշկուելու համար հիւանդին անկողնում պառկեցնել, վիզի կապով փաթաթել, կոկորդն ապաջրով ողողել կամ մեծ բաժակ ջրի մէջ մէկ թէյի գդալ բորակի թթուա ածել եւ ողողել, իսկ ջերմի դէմ օրական 1–2 անգամ քինա տալ, փորկապութեան դէմ էլ՝ լուծողականներ։

Երեխայի կոկորդի բորբոքում

Երեխային պահել անկողնում, վիզը փաթաթել կապով, տաք կաթ խմեցնել եւ ապաջրի գոլորշի շնչել տալ։ Երեխան, երբ դիշեր ժամանակ յանկարծակի հիւանդանում է կոկորդի սուր բորբոքումով եւ սկսում է խիստ հազալ, նշանակում է օդի պակասութիւն է զգում. երեխային ինքնաեռից տաք գոլորշի շնչել տալ եւ ոտքերը տաք ջրի մէջ պահել։

(Շար. 1)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ՃՇՏՈՒՄՆԵՐ

ՄԻՆԱՍ ԱՄԹԵՑԻՒ ՄԱՍԻՆ

(ՆԻՒԹԵՐ՝ ԶՆԲՈՒՇԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ)

(Շար. տե՛ս «Բազմավէպ» 1966, թ. 7–8, էջ 193)

Ա. ԱԼՊՕՅԱՃԵԱՆԻ ՍԽԱԼՆԵՐԸ

Մինաս Ամթեցու մասին Զնքուշի վերաբերեալ Ա. Ալպօյաճեանի սխալները, աւելի ճիշտ՝ խեղաթիւրումները կը սկսին Ամթեցու եպիսկոպոս ձեռնադրուած օրէն։ Այսպէս, մինչ Հ. Ն. Ակինեան կը գրէ. «1666ին Մինաս Երուսաղէմ կ'երթայ եւ ուրիշ երկու նուիրեալներու հետ եպիսկոպոս կը ձեռնադրուի Եղիազար հակաթոռ կաթողիկոսէն» (Հ. Ա. 1960, թիւ 7–9), լռելով ո՞ր քաղաքի, ո՞ր թեմի վրայ ձեռնադրուելու մասին, Ա. Ալպօյաճեան, իւրայատուկ «հաւանօրէն»ը օգնութեան կանչելով, ելը գրէ. —

«1666ին երկու վարդապետներու հետ (Մինաս Ամթեցին) եպիսկոպոս կը ձեռնադրուի Երուսաղէմի մէջ Եղիազար Այնթապցիէն, հաւանօրէն Զնքուշի վրայ, ուր էր 1680ին» («Պատմութիւն Եւդոկիոյ հայոց», էջ 646)։

Կրկնութենէ խուսափելու համար՝ զանց կ'ընենք այստեղ մեր դիտողութիւնները «հաւանօրէն Զնքուշի վրայ» բառերուն այլանդակօրէն «ուր էր 1680ին» բառերուն կցուելուն մասին (Այդ դիտողութիւնները հանգամանօրէն կատարած ենք մեր «Զնքուշն անիրաւուած» յօդուածին մէջ. «Բազմավէպ», 1964, թիւ 4–6, էջ 125–126), կ'անցնինք ուղղակի սխալին ճշտումին։

1666ին Զնքուշի առաջնորդն էր Մարկոս վարդապետը, եւ այս ո՛չ թէ «հաւանօրէն» այլ ստուգապէս — «Եւ անկէ (Զնքուշի Յովհաննէս վարդապետէն) ետք, նոյն թուականին, ՌՂԲ (1643) տարին աթոռը կը յաջորդէ անոր աշակերտը Մարկոս վարդապետ Հացուտցի (Հացուտը Զնքուշի մօտիկ փոքր գիւղ մըն էր)... ՌՃԻԸ (1679) թուականին վախճանեցաւ Մարկոս վարդապետը եւ...» (Թ. Ա. Բ., էջ 458)։

Ուրեմն, ճիշտ կ'ըլլայ ըսել, 1666ին Մինաս եպիսկոպոս ձեռնադրուեցաւ ո՛չ թէ Զնքուշի, այլ Թոխատի վրայ, ուր մի քանի տարի առաջ գացած էր քարոզելու, ինչպէս տեսանք Հ. Ներսէս Ակինեանի վերաբերեալ մասին սկիզբը, եւ, անտարակոյս, սիրուած ալ էր։ Զայս կ'ապացուցանեն Թոխատի մէջ իրեն աշակերտած գրիչները՝ Թոխատցի Միքայէլ եւ Զուզայեցի Մկրտիչ իրենց բոլոր յիշատակարաններուն մէջ, մինչեւ 1696, Մինաս Ամթեցին «արհեպիսկոպոս Եւդոկիակերտի» եւ «առաջնորդ Թոխատու» կոչելը (այս մասին բացատրած ենք ներկայ յօդուածի վերջամասին մէջ) եւ, մանաւանդ, Թոխատի մէջ Մինասի «հոգեւոր Տէրը»՝ Եղիազար հակաթոռ կաթողիկոսը՝ Մինասին պէս «դոլ ու դանատ»ի մը կարիքն ունենալը, ինչպէս պիտի տեսնենք ստորեւ։

Ա. Ալպօյաճեան Թոխատի աւելի քան քառորդ դարու առաջնորդութիւնը, իր «հաւանօրէն»ներով, շրջափոխած, յետառաջ տարած է, Ամթեցին Թոխատի առաջնորդական աթոռին վրայ, ուրիշ

© National Library of Armenia